

**ՊԱԹՈԼՈԳԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ (ԱԽՏԱՀՅՈՒՍՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԲԶՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ) ԱԽՏՈՐՈՇԻՉ ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԱԼԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**Ամփոփում**

**Նպատակ**

Ուղեցույցի նպատակն է գրականության ամփոփ վերլուծության արդյունքում ստեղծել ախտաբանության բնագավառում տրվող եզրակացությունների ձևակերպման խորհուրդներ ախտորոշիչ մեկնաբանական սխալները հայտնաբերելու և նվազեցնելու համար:

**Մեթոդաբանություն**

Սույն ուղեցույցը մշակվել է Հիստոլոգիայի հայ-գերմանական գիտագործնական կենտրոնի և ԵՊԲՀ կլինիկական պաթոլոգիայի լաբորատորիայի պաթոլոգների կողմից: Ուղեցույցի հիմնական գրականական աղբյուր է հանդիսացել Ամերիկյան պաթոլոգների քոլեջի (College of American Pathologists), Լաբորատոր Որակի Կենտրոնի (Laboratory Quality Center) և Անատոմիական և Վիրաբուժական Պաթոլոգիայի Ղեկավարների Ասոցիացիայի (Association of Directors of Anatomic and Surgical Pathology) կողմից ստեղծված «Վիրաբուժական պաթոլոգիայում և բջջաբանությունում ախտորոշիչ մեկնաբանությունների սխալի նվազեցման» կլինիկական ուղեցույցը ինչպես նաև MEDLINE, PubMed, Cochrane library և UpToDate շտեմարանների արդի տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթում հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE): Ուղեցույցի տեղայնացման գործընթացը իրականացվել է համաձայն միջազգային ADAPTE մեթոդաբանության: Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է ախտաբանության հետ առնչություն ունեցող բոլոր մասնագետների համար՝

հյուսվածաբանների, բջջաբանների, առողջապահության կազմակերպիչների, ապահովագրական ընկերությունների աշխատակիցների և այլն:

### **Արդյունքներ**

Նախագծվել են հինգ խորհուրդներ. 1) Ախտաբանները պետք է ստեղծեն գործընթացներ ընտրված ախտաբանական հետազոտությունների եզրակացությունների համար, հայտնաբերելու համար անհամաձայնությունները և հնարավոր մեկնաբանական սխալները; 2) Ախտաբանները պետք է կազմակերպեն դեպքերի քննարկումներ ճիշտ ժամանակին, հիվանդների վարման վրա բացասական ազդեցությունը բացառելու նպատակով; 3) Ախտաբանները պետք է ունենան եզրակացությունների ձևակերպման փաստաթուղթ՝ համապատասխան իրենց պրակտիկ գործունեությանը; 4) Ախտաբանները պետք է շարունակաբար վերահսկեն և արձանագրեն վերլուծությունները; 5) Եթե ախտաբանական դեպքի ամփոփումը որոշակի դեպքի շրջանակներում հարուցում է անհամաձայնություն, ախտաբանները պետք է միջոցներ ձեռնարկեն այն բարելավելու համար:

### **Հետևություններ**

Ապացուցողական բժշկության վրա հիմնված հետազոտությունը փաստում է, որ եզրակացություններում առկա են լինում թերացումներ, ուստի ախտաբանները պետք է մշակեն գործելակարգեր՝ հետազոտությունների եզրակացություններում թերացումների, մեկնաբանական սխալների բացառման համար, հիվանդի բուժման և խնամքի որակի բարձրացման նպատակով:

### **Բանալի բառեր**

**Ապացուցողական բժշկություն, ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, պաթոլոգիա, բջջաբանական եզրակացություն, հյուսվածաբանական եզրակացություն, մեկնաբանությունների ախտորոշիչ սխալ:**

### **Պատասխանատու համակարգող**

Խաչատրյան Փ. Ս. ք.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Հերացի» հիվանդանոցային համալիրի «Կլինիկական պաթոլոգիայի» լաբորատորիայի ղեկավար, «Ախտաբանական անատոմիայի և կլինիկական մորֆոլոգիայի» ամբիոնի դասախոս, «Հիստոջեն» պաթոլոգիայի հայ-գերմանական գիտագործնական կենտրոնի պաթոլոգ:

### **Աշխատանքային խումբ**

- Մխիթարյան Ա. Գ. ք.գ.թ., Երևանի «Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ի «Ախտաբանական անատոմիայի» բաժանմունքի ղեկավար, «Հիստոջեն» պաթոլոգիայի հայ-գերմանական գիտագործնական կենտրոնի պաթոլոգ:
- Հակոբյան Գ. Ա. ք.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Հերացի» հիվանդանոցային համալիրի «Կլինիկական պաթոլոգիայի» լաբորատորիայի բժիշկ-պաթոլոգ, «Ախտաբանական անատոմիայի և կլինիկական մորֆոլոգիայի» ամբիոնի դասախոս:

### **Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Պատասխանատու համակարգողը հայտարարում է շահերի բախման բացակայության վերաբերյալ:

### **Շնորհակալական խոսք**

Հեղինակը իր երախտագիտությունն է հայտնում սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրաժ գործընկերներին:

### **Բովանդակություն**

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Առանցքային հարց

Ուղեցույցի հայտարարություններ

Սահմանափակումներ

Ուղեցույցի ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Գրականության ցանկ

Հավելված

### **Հապավումներ**

ADASP (Association of Directors of Anatomic and Surgical Pathology)՝ Անատոմիական և Վիրաբուժական Պաթոլոգիայի Ղեկավարների Ասոցիացիա

CAP (College of American Pathologists)՝ Ամերիկյան պաթոլոգների քոլեջ

LQC (Laboratory Quality Center)՝ Լաբորատոր Որակի Կենտրոն

### **Նախաբան**

Ախտաբանության՝ ախտահյուսվածաբանության և բջջաբանության բնագավառում հետազոտման շրջանը նույնն է, ինչ այլ լաբորատոր հետազոտությունների ժամանակ [1-4]: Այն կազմված է նախավերլուծական (պրեանալիտիկ), վերլուծական (անալիտիկ) և հետվերլուծական (պոստանալիտիկ) փուլերից: Նախա- և հետվերլուծական փուլերը շատ նման են կլինիկական լաբորատոր հետազոտություններին: Նախավերլուծական փուլը կազմված է նյութի ստացումից, նյութի նշագրումից, նյութի առաքումից լաբորատորիա, որտեղ այն մշակվում է անալիտիկ փուլի համար: Հետվերլուծական փուլը սկսվում է եզրակացության ձևակերպումով և ավարտվում այն կլինիցիստին հասցնելով:

Ի տարբերություն հետազոտության շրջանների այլ փուլերի, ախտաբանահյուսվածաբանությունում և բջջաբանությունում վերլուծական փուլը էապես տարբերվում է այլ բնագավառների նմանօրինակ փուլից (ի տարբերություն լաբորատոր ախտորոշման), քանի որ այն պայմանավորված է առարկայական ապակին

ուսումնասիրելիս ախտաբանի բնորոշ մեկնաբանության հետ [5-9]: Ըստ այդմ, այն ավելի սուբյեկտիվ է, քան լաբորատոր այլ թեստերը: Կան մի շարք գործոններ, որոնք նպաստում են ճշգրիտ մեկնաբանական ախտորոշմանը, ներառյալ 1) ախտաբանի գիտելիքները և փորձառությունը, 2) արդյունքների համադրումը կլինիկական տվյալների հետ, 3) ստանդարտիզացված ախտորոշիչ չափանիշները և տաքսոնոմիան (համակարգվածությունը), 4) հաստատող հավելյալ հետազոտությունների առկայությունը, 5) դեպքի կրկնակի հետազոտությունը:

Հետազոտությունները ցույց են տվել կլինիկական համադրման, ախտորոշիչ չափանիշների ստանդարտիզացման, համակարգվածության և լրացուցիչ հաստատող հետազոտությունների հավելյալ արժեքավորությունը բջջաբանական և ախտահյուսվածաբանական եզրակացությունների ճշգրտության հարցում [5, 10-15]: Այս գործոններից որոշները նպաստում են ճշգրիտ ախտորոշմանը, սակայն կարևորը հանդիսանում են ախտաբանի գիտելիքները և փորձառությունը: Չնայած բազմաթիվ գիտական աշխատանքներ ցույց են տվել, որ դեպքերի վերլուծությունը հայտնաբերում է ախտորոշիչ մեկնաբանական սխալները, այդուհանդերձ ջանքեր չեն գործադրվել այդ պրակտիկան ֆորմալ դարձնելու ուղղությամբ, որպես սխալների նվազեցման քաղաքականություն:

### **Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն**

Ուղեցույցը մշակվել է «Հիստոքեն» պաթոլոգիայի հայ-գերմանական գիտագործնական կենտրոնի և ԵՊԲՀ «Կլինիկական պաթոլոգիայի» լաբորատորիայի պաթոլոգների կողմից: Տեղեկատվության հավաքագրման մարտավարությունը ընդգրկել է բանալի բառերի օգնությամբ իրականացվող բազմաբնագավառ որոնում MEDLINE, PubMed, Cochrane library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարաններում: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն, ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն, ապացույցների ուժի

և որակի գնահատականներ և այլ), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Ուղեցույցի հիմնական գրականական աղբյուրներն են հանդիսացել Ուղեցույցի հիմնական գրականական աղբյուր է հանդիսացել Ամերիկյան պաթոլոգների քոլեջի (CAP), Լաբորատոր Որակի Կենտրոնի (LQC) և Անատոմիական և Վիրաբուժական Պաթոլոգիայի Ղեկավարների Ասոցիացիայի (ADASP) կողմից ստեղծված փորձագիտական հանձնաժողովի ստեղծած «Վիրաբուժական պաթոլոգիայում և բջջաբանությունում ախտորոշիչ մեկնաբանությունների սխալի նվազեցման» կլինիկական ուղեցույցը: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս CAP/LAQ/ADASP հեղինակած փաստաթղթում հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE): Ապացույցների դասակարգման մեթոդաբանության մանրամասները տես՝ Հավելված 1 և Հավելված 2:

«Հիստոջեն» պաթոլոգիայի հայ-գերմանական գիտագործնական կենտրոնը տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները իրականացրել է ըստ ADAPTE մեթոդաբանության՝ աշխատանքային խմբի անդամների առերես հանդիպումների և հեռահար շփումների միջոցով: Ուղեցույցի բոլոր դրույթների վերաբերյալ ապահովվել է աշխատանքային խմբի անդամների կոնսենսուս: Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է ախտաբանների՝ ախտահյուսվածաբանների և բջջաբանների, առողջապահության կազմակերպիչների, ախտաբանության բնագավառի հետ առնչություն ունեցող այլ մասնագետների համար:

### **Առանցքային հարցեր**

Հանձնաժողովի կողմից ձևակերպվել է առանցքային հարց. որո՞նք են ամենաարդյունավետ ուղիները ախտաբանության բնագավառում մեկնաբանական

ախտորոշիչ սխալների նվազեցման համար: Հիմնական հարցադրումները, որոնք ներկայացվել են փորձագիտական խմբին, եղել են.

1. Արդյո՞ք ախտահյուսվածաբանական դեպքերի (առարկայական ապակիների և/կամ եզրակացությունների) նպատակային վերլուծությունը (կամ անալիտիկ, կամ հետանալիտիկ փուլերում) նվազեցում է ախտորոշիչ սխալի տոկոսը (հաճախ դիտարկվող որպես փոփոխված եզրակացություն) կամ բարձրացնում մեկնաբանական սխալի հայտնաբերման տոկոսը չվերլուծված, պատահականորեն վերլուծված և պարբերաբար վերլուծված դեպքերում:
2. Վերլուծության համար ընտրված դեպքերի ո՞ր մեթոդներն են ցույց տվել առավել բարձր/ցածր տոկոս մեկնաբանական սխալի հայտնաբերման առումով, չվերլուծված, պատահականորեն վերլուծված և պարբերաբար վերլուծված դեպքերի համեմատ:

Հարցերի մանրամասն շրջանակը.

- Կարո՞ղ են արդյոք դեպքերի նպատակային վերլուծությունները հանգեցնել սխալների հայտնաբերման ավելացման:
- Կա՞մ արդյոք մասնավոր մեթոդ (օրինակ պրոսպեկտիվ կամ ռետրոսպեկտիվ, կույր վերլուծություն և այլն) որը կարող է բերել սխալների ցածր տոկոսի կամ քիչ թվով փոփոխված եզրակացությունների: Եթե այո, ապա ո՞րն է այդ մեթոդը:
- Կա՞մ արդյոք ախտորոշման հատուկ տիպ (օրինակ չարորակ, սահմանային կամ բարորակ և այլն), որը կարող է ունենալ սխալի ավելի մեծ հակվածություն: Եթե այո, ապա որը՞:
- Կա՞մ արդյոք օրգան/համակարգ, որն ավելի շատ է կապված գրականության մեջ որպես խնդրահարույց հայտնաբերված սխալների/անհամաձայնությունների ավելի բարձր տոկոսի հետ (օրինակ վահանագեղձի բարակ ասեղային ասպիրատ, գլխուղեղից բիոպտատ, լիմֆոմա և այլն): Եթե այո, ապա որը՞:
- Ինչպիսի՞ն է բազմաօրգանային վերլուծության տոկոսի հարաբերությունը մեկ օրգանի վերլուծության տոկոսի համեմատ (օրինակ ներքին և/կամ արտաքին):

- Արդյո՞ք կոյր վերլուծությունները հայտնաբերում են ավելի շատ կամ քիչ սխալներ որ կոյր մեթոդների համեմատ:
- Կարո՞ղ ենք մենք ինչ-որ բան սովորել արտաքին վերլուծության ուսումնասիրություններից, որը կարող է վերաբերվել նաև ներքին վերլուծություններին:
- Կարո՞ղ ենք մենք հաստատել արտաքին սխալի տոկոս (benchmark) ախտահյուսվածաբանությունում և բջջաբանությունում:
- Կարո՞ղ ենք մենք հաստատել ներքին սխալի տոկոս (benchmark) ախտահյուսվածաբանությունում և բջջաբանությունում:
- Ո՞րն է արտաքին և ներքին վերլուծությունների անցկացման արժեքը:
- Ո՞րն է արտաքին և ներքին վերլուծությունների ազդեցությունը օգտակարության վրա:
- Ո՞րն է արտաքին և ներքին վերլուծությունների անցկացման ազդեցությունը հիվանդի խնամքի վրա:
- Նկատվե՞լ է արդյոք սխալների տոկոսի նվազում ժամանակի ընթացքում:
- Լրացուցիչ ո՞ր գործոններն են առավել հաճախ ընդգծվում (օրինակ սանդարտ չափորոշիչներ, կլինիկական համադրում, լրացուցիչ թեստեր և այլն), և ո՞ր օրգանի կամ ախտորոշման հետ:

## **ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**1. Խորհուրդ – Ախտաբանները պետք է մշակեն գործընթացներ հետազոտվող դեպքերի վերլուծության համար, անհամաձայնությունների և հնարավոր մեկնաբանական սխալների հայտնաբերման նպատակով, ի նպաստ հիվանդների վարման բարելավման:**

Գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ հետազոտվող դեպքերի վերլուծությունը հայտնաբերում է անհամաձայնությունները և սխալները, ավելին, անհամաձայնությունների և սխալների տոկոսը նվազում է այնքան, որ ունի կլինիկական



կարևորություն: Ապացուցողականությունը բավարար չէր ցույց տալու համար ուղղակի ազդեցությունը հիվանդի անվտանգության վրա, քանի որ միայն մի քանի հետազոտություններ էին փաստել հիվանդության՝ կլինիկական ելքի վրա մեկնաբանական սխալի ազդեցության մասին: Ապացուցողականության ընդհանուր GRADE որակը *ցածր* է, բայց կլինիկորեն էական անհամաձայնությունների բարձր տոկոս ունեցող բազմաթիվ դեպքերի առկայությունը, ինչպես նաև ախտորոշիչ սխալի նշանակալի վնասող ազդեցությունը անհատի բուժման վրա թույլ տվեցին փորձագիտական հանձնաժողովին այս հայտարարությունը որակել որպես «խորհուրդ»:

Բազմաթիվ աշխատություններ են հրատարակվել, որոնք փաստում են, որ դեպքերի վերանայումը/վերլուծությունը երկրորդ ախտաբանի կողմից հայտնաբերում է անհամաձայնություններն ու պոտենցիալ սխալները: Նշանակալի սխալների տոկոսը տատանվում է 0.1%-ից մինչև 10% և ավելի, կախված վերլուծության մեթոդից և կոնկրետ դեպքի բնույթից: Դեպքերի վերանայման ձևը և չափը արտացոլվում են խորհուրդներում, սակայն պետք է հարմարեցվեն նաև առանձին լաբորատորիաների կարիքներին: Լավագույն դեպքում, գերնպատակն է խրախուսել և ընդլայնել համագործակցական թիմային աշխատանքը և նվազեցնել ախտորոշիչ սխալները:

Տեղեկատվության հավաքագրումը կատարվել է բազմաթիվ գիտական հոդվածներից, որոնցում նկարագրվում են ախտահյուսվածաբանական կամ բջջաբանական հետազոտությունների վերլուծությունները (հավելված 3): Բոլոր հոդվածներում արտացոլվում է այն, որ դեպքերի վերանայումը հայտնաբերում է անհամաձայնություններն ու ախտորոշիչ սխալները: Որոշ հոդվածներում սխալները բնորոշվել էին որպես “նշանակալի” կամ “գլխավոր”: Ծրագրերից մեկը՝ Cancer Care Ontario, կատարելով նմանատիպ ուսումնասիրություն, առաջարկում էր կատարել ուռուցքային ախտորոշումների ընտրողական վերլուծություն:

**2. Խորհուրդ – Ախտաբանները պետք է անցկացնեն դեպքերի ճիշտ ժամանակին վերլուծություն, հիվանդների վարման արդյունքների վրա դրական արդյունք ունենալու համար:**

Գրականության վերլուծությամբ հայտնաբերվեցին միջին որակի 4 գիտական աշխատանքներ, որոնք ցույց էին տալիս, որ դեպքերի պրոսպեկտիվ վերլուծությունը (մինչև եզրակացության ստորագրումը) ռետրոսպեկտիվ վերլուծության (եզրակացության ստորագրումից հետո) համեմատ կարող է նվազեցնել անհամաձայնությունների/սխալների տոկոսը և փոխել եզրակացությունների տոկոսը: Ապացուցողականությունը բավարար չէր ցույց տալու համար վնասող ազդեցությունը հիվանդի անվտանգությանը, քանի որ միայն մի քանի աշխատություններ էին հրատարակված մեկնաբանական սխալի արդյունքում հիվանդության ելքի մասին: Ապացուցողականության GRADE որակը *ցածր* է, սակայն առկա 4 հետազոտությունների հետևողական արդյունքները և հակառակն ապացուցող աշխատանքների բացակայությունը թույլ տվեցին այս հայտարարությունը որակել որպես «խորհուրդ»:

Ախտահյուսվածաբանական և բջջաբանական դեպքերի կրկնակի վերանայումը պետք է կատարվի ճիշտ ժամանակին, համոզվելու համար համապատասխան բուժման տակտիկայի և հիվանդի վարման ճշտության մեջ: Լավագույն դեպքում խրախուսվում է հնարավորության դեպքում կատարել պրոսպեկտիվ վերանայումներ, և բոլոր ջանքերը պետք է ուղղված լինեն դեպքերի ճիշտ ժամանակին վերանայմանը մինչև եզրակացության հանձնումը: Այնուամենայնիվ, դեպքերի ռետրոսպեկտիվ վերանայումը ևս երբեմն կարող է լինել օգտակար – ասենք այն դեպքերում, երբ անհնար է պրոսպեկտիվ վերանայումը տարբեր լաբորատորիաներում առկա սահմանափակումների պատճառով, հատկապես ժամանակային սահմանափակումների, սակայն ամեն դեպքում ակնկալվում է այդ դեպքերի ճիշտ ժամանակին վերանայում ևս: Բացի այդ, կան նաև հատուկ միջոցառումներ, ինչպիսիք են կլինիկական համադրման կոնֆերանսները և/կամ

բջջաբանական/հյուսվածաբանական դեպքերի համադրումները հեռացված վիրահատական նյութով – երբ ռետրոսպեկտիվ երկրորդային վերլուծությունները ստանդարտ գործընթացներ են: Պրոսպեկտիվ վերլուծությունների կատարման գերադասությունը չի կարելի դիտարկել որպես դատավճիռ ռետրոսպեկտիվ վերլուծություններ չկատարելու համար:

Եթե դեպքերի վերլուծությունն ունի ազդեցություն հիվանդների վարման վրա, ապա սխալների հայտնաբերումը պետք է կատարվի նախքան որոշակի բուժում սկսելը: Սխալների հայտնաբերումն այս փուլում կանխում է ոչ անհրաժեշտ և պոտենցիալ վնասակար բուժման անցկացումը: Իդեալական ժամանակը դեպքերի վերանայման համար մինչև եզրակացության ստորագրումն է: Այն լավագույնն է մի շարք պատճառներով. 1) ճշգրիտ բուժման պլանը կարող է հիմնված լինել վերլուծված/վերանայված ախտորոշման վրա, 2) նվազեցվում է կրկնակի աշխատանքի և եզրակացությունների փոփոխման կարիքը, 3) նվազեցվում է ցանկացած կասկածի հնարավորություն ախտորոշման վերաբերյալ և 4) ստեղծում է վստահություն և հավատ լաբորատոր համակարգի հանդեպ: Որոշ հոդվածներ ցույց են տալիս, որ դեպքերի վերանայումը մինչև եզրակացության ստորագրումը կապված է փոփոխված եզրակացությունների թվի ավելացման հետ տվյալ լաբորատորիայում, մասնավորապես ախտորոշման վերաձևակերպումների առումով [19-22]: Մեկ այլ գիտական աշխատությունում նշվում է, որ պրոսպեկտիվ վերանայում կատարող լաբորատորիաներում եզրակացությունների փոփոխման տոկոսն ավելի ցածր է ռետրոսպեկտիվ վերլուծություն կատարող լաբորատորիաների համեմատ [23]:

«Ճիշտ ժամանակին» բնորոշումը կարող է էապես տուժել կլինիցիստների հետ շփման արդյունքում: Օրինակ, երբ դեպքերն ուղարկվում են լաբորատորիայից դուրս երկրորդ կարծիքի համար, այդ երկրորդ կարծիքի ստացումը կարող տևել օրեր, կամ նույնիսկ շաբաթներ: Եթե կլինիցիստը զգուշացված է և հետաձգում է բուժման նշանակումը մինչև ախտորոշումը կլինի հասանելի, խորհրդատվությունը դեռ դիտարկվում է որպես ճիշտ ժամանակին: Նույն կերպ, ցանկացած դեպքում, երբ նույն

լաբորատորիայում երկրորդ կարծիքի ստացումը պահանջում է նշանակալի ժամանակահատված կատարման համար, կլինիցիստի զգուշացվածությամբ այդ մասին ևս դիտարկվում է որպես ճիշտ ժամանակին:

Մյուս կողմից, դեպքերի վերանայումը ստորագրումից հետո ևս ընդունված և հաստատված մոտեցում է: Օրինակ են ծառայում դեպքերի վերլուծության բազմաթիվ տեսակները մուլտիդիսցիպլինար կոնֆերանսների ժամանակ: Այս վերլուծությունները պետք ներառվեն յուրաքանչյուր դեպքի վարման նորմալ աշխատանքային գործընթացի և բուժական որոշումների կայացման մեջ, հաճախակի հետաձգվելով և հիմնվելով մուլտիդիսցիպլինար կոնֆերանսներում քննարկումների վրա: Նույնիսկ եթե այս վերլուծությունները կարող են հանգեցնել եզրակացությունների փոփոխման և կրկնակի աշխատանքի, դրանք պետք է կատարվեն ճիշտ ժամանակին և հանգեցնեն համապատասխան բուժման վարման:

Դեպքերի վերլուծությունը ստորագրումից հետո երկարատև ժամանակ անց կարող է կործանարար լինել ինչպես հիվանդի, այնպես էլ ախտաբանի համար: Դեպքի ամփոփումից ամիսներ կամ տարիներ անց սխալի հայտնաբերումը չի կարող օգնել հիվանդին, քանի որ ենթադրաբար բուժման վարումը կատարվել է արդեն իսկ ստորագրված եզրակացության հիման վրա: Այլընտրանքային կերպով այն կարող է հանգեցնել այնպիսի ախտորոշման, որը մինչ այդ հայտնի չէր, համապատասխան բուժման հնարավոր ուշացումով և հիվանդության առաջընթաց փուլի զարգացման հնարավորությամբ:

**3. Փորձագիտական կոնսենսուսային կարծիք - Ախտաբանները պետք է ունենան դեպքերի վերլուծության գործընթացի փաստաթուղթ, որը համապատասխան կլինի իրենց գործունեության կարգավորմանը:**

Ապացուցողականության որակը *ցածր* էր աջակցելու համար դեպքի վերլուծական գործընթացի կիրառմանը դեպքերի չվերլուծելու գործընթացի համեմատ, և աջակցելու համար նպատակային վերլուծություններին պատահական վերլուծությունների

գործընթացի համեմատ; այնուամենայնիվ, ապացուցողականությունը *շարք* *ցածր* էր վերլուծության տարբեր մեթոդների միջև տարբերակման առումով: Ապացուցողականության ընդհանուր GRADE որակը *շարք* *ցածր* էր, ինչն ուղղորդեց հանձնաժողովին դասակարգել ուղեցույցի այս հայտարարությունը որպես «փորձագիտական կոնսենսուսային կարծիք»:

Գրականության մեջ հրատարակված են վերլուծական գործընթացի բազմաթիվ տարբերակներ, ախտորոշման մեկնաբանական սխալի հայտնաբերման տարբեր մակարդակներով: Կախված մեթոդից, վերլուծությունները կարող են ազդել նաև անհրաժեշտ ժամանակի վրա, մեծացնել աշխատատարությունը և ավելացնել գինը: Իդեալական մեթոդը կարող է կախված լինել պրակտիկ կարգավորումներից, ինչը կարող է տատանվել փոքր սովորական գործունեության կանոնակարգումից մինչև բարձր մասնագիտացմամբ ակադեմիական գործունեություն: Ըստ այդմ, վերլուծական պրոցեսները պետք է հարմարեցվեն գործնական կանոնակարգումներին սխալի հայտնաբերման հնարավորության մեծացման և բացասական ազդեցությունների նվազեցման նպատակով: Նպատակային վերլուծությունը, սովորական վերլուծությունը, վերլուծված դեպքերի տոկոսը, կոյր վերլուծությունը, բաց թողնված ախտահարումների բարձր մակարդակով դեպքերի մասնաբաժինը և այլ մեթոդներ պետք է հաշվի առնվեն նախագծելու համար անհատական գործունեության լավագույն պիտանի համակարգերը: Լաբորատորիայի ղեկավարը պատասխանատու է քաղաքականության որոշման համար:

Ախտաբանության բաժանմունքները պետք է օրինականացնեն իրենց վերլուծական գործունեությունը, և ներառեն որոշ կամ բոլոր վերլուծական գործունեությունները իրենց որակի հսկողության պլանի մեջ ախտահյուսվածաբանության և բջջաբանության ոլորտներում: Դեպքերի վերլուծության անցկացման և արձանագրման պլանը կարող է լինել ախտորոշիչ սխալի հայտնաբերման վերջին հնարավորությունը: Չնայած հրատարակված են վերլուծությունների բազմաթիվ տեսակներ, բաժանմունքները պետք է մշտապես արձանագրեն, երբ են կատարվում ներբաժանմունքային

վերլուծություններ: Այդ վերլուծությունները կարող են ներառել, բայց սահմանափակված չեն. 1) վերլուծել դեպքերի ընտրված տոկոս, 2) վերլուծել ընտրված տիպի ախտորոշումներ, 3) վերլուծել ընտրված օրգան-համակարգ կամ նյութի տեսակ, 4) վերլուծել կույր դեպքեր, 5) վերլուծել մուլտիդիսցիպլինար քննարկումների դեպքերը, 6) ուղարկել սեփական դեպքերը դուրս (այլ լաբորատորիա) վերանայման, 7) վերլուծել դեպքեր բջջաբանական/հյուսվածաբանական համադրումների ժամանակ, 8) դեպքերի վերլուծություն փորձագիտական հանձնաժողովում, 9) դեպքերի վերլուծություն ցանկացած այլ պատճառով:

Կարևոր սկզբունքները, որոնք պետք է հաշվի առնվեն դեպքերի վերանայման/վերլուծության ժամանակ, ներառում են. 1) վերանայող ախտաբանը պետք է անկախ ձևակերպի իր կարծիքը, առանց ազդեցությունների այլոց կողմից: Ոմանք կարծում են, որ կույր վերլուծությունները օպտիմալ են, բայց այդ հանգամանքը հստակորեն ներկայացված չէ որպես անհրաժեշտ [24-26], 2) վերանայող ախտաբանը պետք ունենա բավականին փորձառություն վերանայման ենթակա նյութի բնագավառում, 3) դեպքերի վերլուծությունը մինչև ախտորոշման ստորագրումը կարող է կիրառվել թիմային աշխատանքի ստեղծման նպատակով և հրաշալի հնարավորություն է ախտաբանների համար սովորելու և իրենց ունակությունների բարելավման առումով, 4) վերլուծման մարտավարությունը պետք է ներառի բացասական դեպքերը, որովհետև շատ սխալներ կեղծ բացասական են [27, 28], 5) ընտրված օրգանների կամ հիվանդությունների նպատակային վերլուծությունը բերում է ավելի շատ սխալների հայտնաբերման կույր վերլուծված դեպքերի համեմատ [29]:

Երբ տեղի է ունենում դեպքերի վերլուծություն, փաստացի վերլուծությունը պետք է արձանագրվի նույն կերպ: Երբ դեպքերը վերլուծվում են մինչև ստորագրվելը, շատ բաժանմունքներ գերադասում են արձանագրել վերլուծությունը եզրակացության հիմնատեքստում: Վերլուծությունները կարող են արձանագրվել նաև որակի վերահսկողության առանձին հատվածում, թղթային կամ էլեկտրոնային տարբերակով: Մեկ այլ կարծիքի համաձայն վերլուծությունները պետք է արձանագրվել որպես

եզրակացության հավելված: Մուլտիդիսցիպլինար կամ այլ տիպի կոնֆերանսների բաժինները ևս կարող են ընդգրկվել վերլուծությունների որակի վերահսկողության արձանագրությունների հետ:

Ադեկվատ վերլուծությունների քաղաքականության որոշումը կարող է բարդ լինել յուրահատուկ կարգավորումներում: Առաջին, ամենախնդրահարույց կանոնակարգումը ադեկվատ վերլուծությունների քաղաքականության որոշման հարցում առնչվում է միայնակ ախտաբանների հետ, երբ տվյալ լաբորատորիայում չկան այլ ախտաբաններ, ում հետ կարելի է քննարկել դեպքը/դեպքերը: Հիմնականում բոլոր հրատարակված տեղեկությունները ներառում են երկրորդ ախտաբանին, ով վերլուծում է հիմնական ախտաբանի աշխատանքը: Չնայած պրակտիկան կարող է ունենալ որոշակի արժեք, կան նաև որոշ հրատարակումներ միայնակ ախտաբանների՝ սեփական եզրակացությունների կրկնակի վերանայման մասին: Նման պարագայում առնվազն պետք է արձանագրել դեպքերի վերլուծությունը կլինիկական կոնֆերանսների համար և այն դեպքերը, որոնք վերանայվել են այլ լաբորատորիաներում:

Երկրորդ, ախտաբանների փոքր խմբերի համար (մեկից ավելի ախտաբաններ) խրախուսվում է նույնիսկ նույն լաբորատորիայում երկրորդ ախտաբանի կողմից դեպքերի վերանայումը, կամ էլ պետք է ընտրվի միայնական ախտաբանի համար նախատեսված քաղաքականությունը: Երրորդ՝ որոշ երրորդային օգնության կանոնակարգերում շատ քիչ դեպքեր են ուղարկվում այլ լաբորատորիաներ երկրորդ կարծիքի համար: Սակայն շատերը, եթե ոչ բոլորը այս կանոնակարգից ունեն պաթոլոգիայի ենթամասնագիտացված մեծ խմբեր: Այս պարագայում կլինիկական կոնֆերանսների համար վերլուծված, ինչպես նաև ենթամասնագիտացված խմբերում և դրանց միջև վերլուծված դեպքերը կարող են որակվել որպես նվազագույն վերլուծական մարտավարություն:

**4. Փորձագիտական կոնսենսուսային կարծիք – Ախտաբանները պետք է պարբերաբար վերահսկեն և արձանագրեն դեպքերի վերլուծության արդյունքները:**

Ապացուցողականության որակը, հիմնված պայմանագրային ուսումնասիրությունների վրա, եղել է *ցածր* այն արդյունքների համար, որոնք ստացվել էին որոշակի ախտորոշումների և/կամ օրգան համակարգերի ներդիտարկային պայմանագրերում: Հանձնաժողովի կողմից վերլուծված գրականության մեջ չկային աշխատություններ, որոնք անմիջականորեն կապ ունեին ախտորոշիչ պայմանագրերի շարունակական վերահսկման կամ զարգացման հետ: Ապացուցողականության GRADE որակը եղել է *շարժ ցածր*, ինչը ուղղորդել է հանձնաժողովին դասակարգել ուղեցույցի այս հայտարարությունը որպես «փորձագիտական կոնսենսուսային կարծիք»: Այնուամենայնիվ, հիմնվելով որակի հավաստիացման ավանդական սկզբունքների վրա փորձագիտական հանձնաժողովի կարծիքն է, որ վերահսկողությունն անհրաժեշտ է՝ պահպանելու համար վստահությունը ախտորոշումների որակի հանդեպ: Վերլուծության նախագծի հաստատումից հետո վերլուծության գործընթացը պետք է կցվի և լինի վերահսկվող վստահեցնելու համար, որ ծրագիրը գործում է ինչպես նախատեսվել էր, և որ բոլոր ախտաբանները ևս համապատասխան են: Դրան կարելի է հասնել այնպիսի մեթոդով, ինչպիսին է դեպքի վերլուծության բոլոր մակարդակներում վերահսկողությունը մինչ եզրակացությունը ստորագրելը կամ ստորագրումից հետո, փոփոխված/վերլուծված եզրակացությունների վերահսկողությունը, փոքր/մեծ անհամաձայնությունների վերահսկողությունը, լաբորատոր տեղեկատվության լծակների առկայությունը՝ ներառելու համար վերլուծությունների կարգավիճակը գործող էլեկտրոնային գրառումների դեպքերում, և/կամ վերլուծական գործընթացի կատարումը և արդյունքները որպես մասնագիտական գործունեության գնահատման մի մաս ներկայացնելը:

Ի հավելումն, վերլուծությունների արդյունքները պետք է դիտարկվեն այն բնագավառների համար, որոնցում ներդրվելու են և գնահատվեն լրացուցիչ հարցերը այն գործունեությունների վերաբերյալ, որոնք լուսաբանում են մինչ այդ անորոշ դաշտերը, ունեն տեղային փոփոխականություն, բնորոշում են յուրահատուկ դեպքերը, որտեղ լրացուցիչ ներքին և արտաքին փորձառությունը կարող է լինել արժեքավոր,



հայտնաբերելով անհատ մասնագետներին, ովքեր կարող են կարիք ունենալ երկրորդական հավելյալ պրոֆեսիոնալիզմի, հայտնաբերել համակարգերն ու գործառույթների հարցերը, որոնք նպաստում են անհամաձայնությունների և հնարավոր սխալների առաջացմանը:

Վերլուծությունների արդյունքների վերահսկման և արձանագրման ընթացքում անհատ մասնագետները պետք է աշխատեն այն գիտակցությամբ, որ որոշ ախտորոշումներ ունեն բարձր միջդիտորդական փոփոխականության հայտնի հեղինակություն, և որ այդ դեպքերում “անհամաձայնությունը” դիտորդների միջև չի կարող մատնանշել մեկնաբանական սխալը, որպես այդպիսին: Նմանատիպ ախտորոշումների օրինակներ են հանդիսանում, սակայն չեն սահմանափակում էպիթելային դիսպլազիան աղու բորբոքային հիվանդությունների ժամանակ, մետապլազիան Բարետի կերակրափողում, ռեակտիվ թե տափակբջջային ներէպիթելային նեոպլազիան արգանդի վզիկում, Gleason-ի դասակարգումը շագանակագեղձի ադենոկարցինոմայի դեպքում:

Լաբորատորիաները պետք է ստեղծեն գրավոր գործընթացներ և արձանագրեն ներբաժանմունքային վերլուծական ուսումնասիրությունների արդյունքները: Ամենապարզ եղանակը արձանագրելու համար բաժանմունքի ջանքերը վերլուծությունների առումով, մինչև եզրակացության ստորագրելը երկրորդ ախտաբանի կողմից վերանայված դեպքերի մասնաբաժնի հաշվարկումն է: Վերջերս կատարված հետազոտություններից մեկում նշվում էր, որ բաժանմունքներում դեպքերի վերանայումը կազմում է մոտ 10% [30]: Մինչև եզրակացության ստորագրումը և ստորագրումից հետո վերանայված դեպքերի ընդհանուր տոկոսն անհայտ է:

Եթե բաժանմունքը ներդնում է յուրահատուկ դեպքերի վերլուծման քաղաքականություն, ապա կարող է կարիք զգացվել այդ դեպքերի պարբերաբար աուդիտի: Մյուսներն ավելի հաճախ օգտագործում են եզրակացությունների փոփոխությունները ստորագրող ախտաբանի կողմից ախտորոշման վերաձևակերպումով, կամ այն դեպքերը, որոնք ենթարկվել են արտաքին ախտորոշիչ վերլուծության ստորագրումից հետո: Մեծ կամ փոքր ախտորոշիչ համաձայնություններով դեպքերի թիվը և մասնաբաժինը պետք է

համակարգվեն բաժանմունքի և առանձին գործող մասնագետի համար: Որոշ դեպքերում ախտաբանի համար կարող է ոչ ամբողջապես հստակ լինել, արդյոք կարծիքների տարբերությունը պետք է բերի եզրակացության փոփոխության կամ համալրման: Այս մոտեցումը կարող է ընտրվել, երբ պրակտիկայում գործող փոփոխությունների կամ հավելումների միջև տարբերությունը բացահայտ է, և մասնակից ախտաբանները պետք է հաստատակամորեն ընդունեն տարբերությունը: Լրացուցիչ մեթոդները, գնահատելու համար ախտորոշիչ հմտությունները կարող են ներառել սառեցման եղանակով ստացված պարաֆինային հատույթների և բջջաբանական հետազոտությունից հետո հյուսվածքի բիոպսիայի համադրումը: Սրանք ևս կարող են ներդրվել որակի բարձրացման ծրագրում:

Ախտորոշիչ հմտությունների արձանագրման այլ մեթոդները ևս ընդունելի են:

**5. Փորձագիտական կոնսենսուսային կարծիք – Եթե ախտաբանական դեպքի վերլուծությունը որոշակի բնագավառում ցույց է տալիս համաձայնություն ցածր մակարդակ, ապա ախտաբանները պետք է ձեռնարկեն քայլեր համաձայնության բարելավման համար:**

Ապացուցողականության որակը եղել է *ցածր*, չնայած համաձայնությունների բարելավման նպատակով լավագույն մեթոդների կիրառմանը այն դաշտերում, որտեղ համաձայնությունը եղել է վատ: Հնարավոր է, լավագույն մոտեցումները կարող են տարբերվել, կախված հիվանդության առանձնահատկություններից, անհատական գործունեության հատկանիշներից և հասանելի լրացուցիչ ախտորոշիչ թեստերից: Համաձայնությունների բարելավմանն ուղղված մեթոդների ուսումնասիրություններ չեն հայտնաբերվել գրականության մեր որոնումներում, կամ եղել են մեր հետազոտության շրջանակներից դուրս: Հետևաբար ապացուցողականության GRADE որակը չի գնահատվել, ուղղորդելով փորձագիտական հանձնաժողովին այս հայտարարությունը որակել որպես «փորձագիտական կոնսենսուսային կարծիք»:

Ախտաբանների խմբերում և դրանց միջև վատ համաձայնությունների պատճառները տարբեր են: Երկու արտաքին գործոններ պետք է հաշվի առնել միջոցիտորոգային անհամաձայնությունների գնահատման ժամանակ: Առաջին, որոշ հիվանդություններ ըստ էության ունեն ավելի մեծ ներդիտորոգական տարբերություններ, քան մյուսները, և այդ տարբերությունները պետք է ընդունվեն: Երկրորդ, ախտաբանական ախտորոշումները դիանմիկ են և տերմինաբանությունը փոխվում է; նույն երևույթի տարբեր նկարագրությունները պետք է հաշվի առնել և դիտարկել որպես խնդիր, որն առկա է հենց միջոցիտորոգային տարբերություններից: Եթե հայտնաբերվել է վատ միջոցիտորոգական համաձայնություն գործունեության ընթացքում, մասնավորապես անհամաձայնությունների մակարդակը գերազանցում է հրատարկված նորմերը, ապա պրակտիկայի անդամները պետք է օգտագործեն թիմի գործունեության բարելավման մեթոդներ (օրինակ փորձագիտական կոնֆերանսներ, չափագրական սլայդերի համակարգ և այլն):

Ապացուցողականության որակը եղել է *շատ ցածր*, անկախ համաձայնությունների բարելավմանն ուղղված լավագույն մեթոդների կիրառումներից այն դաշտերում, որտեղ համաձայնությունը եղել է վատ: Հնարավոր է, լավագույն մոտեցումները կարող են տարբերվել կախված հիվանդության առանձնահատկություններից, անհատական գործունեության օրինակներից կամ հասանելի լրացուցիչ ախտորոշիչ թեստերից:

Ախտաբանների փորձառությունը, փորձագիտությունը և ունակությունները տարբեր են այն հիվանդությունների շուրջ, որոնք ցուցաբերում են ախտորոշիչ անհամաձայնությունների բարձր մակարդակ: Օրինակները ներառում են վահանագեղձի բարակասեղային ասպիրատի բջջաբանական գնահատումը կամ մետապլազիայի գնահատումը Բարետի կերակրափողի դեպքում: Ստանդարտ ախտորոշիչ չափորոշիչների կիրառումը հզոր մոտեցում է ախտորոշիչ տարբերությունների բարելավման համար [31-33]: Մեթոդները, որոնք ցուցաբերել են ներդիտորոգային անհամաձայնությունների նվազեցում ներառել են միջբաժանմունքային հանձնաժողովային կոնֆերանսները, միանման ախտորոշիչ չափորոշիչներ կիրառելու

համաձայնությամբ: Օգտագործվել է նաև չափագրիչ սլայդերի ցանցը: Համաձայնեցված չափորոշիչների ամրապնդումը լավ է աշխատում վերլուծությունների և խնդրահարույց դեպքերի քննարկումների ժամանակ: Այլ գործոններով պայմանավորված անհամաձայնությունների չափաբաժինը ևս պետք է հաշվի առնել: Այն կարող է ներառել, սակայն չսահմանափակել ծանոթության պակասը որոշ պայմանների, վերջին ժամանակներում կատարված ախտորոշիչ չափորոշիչների և գործընթացների փոփոխությունների հետ:

### **Սահմանափակումներ**

Քանի որ դեպքերի կրկնակի վերլուծությունը հայտնաբերում և շտկում է սխալները, բնական է պատկերացնել, որ այս տեղեկատվությունը կարող է օգտագործվել ախտաբանաանատոմիական լաբորատորիայում որակի չափման համար: Նմանատիպ չափումը կարող է հսկայական հետաքրքրություն ներկայացնել ախտաբանների, կլինիցիստների, ծառայողների, ապահովագրական ոլորտի աշխատակիցների և հիվանդների համար: Այնուամենայնիվ, ներկայումս հստակ չէ ինչպես պետք է մեկնաբանել այս վերլուծության արդյունքները և դրանք չեն կարող օգտագործվել փորձելու համար համեմատել երկու տարբեր ախտաբանության լաբորատորիաներ: Սրա համար պատճառները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

1. Սխալների աղբյուրը տարբեր լաբորատորիաներում կարող է տարբեր լինել:
2. Սխալի բնորոշումը տարբեր լաբորատորիաներում կարող է տարբեր լինել:
3. Սխալների կլինիկական նշանակությունը կարող է տարբերվել:
4. Սխալների հայտնաբերման մեթոդները կարող են տարբերվել:
5. Հետազոտության մեթոդի զգայունությունը վերահսկված չէ և անհայտ է:
6. Կատարման սպասվող միջակայքերը հստակ որոշված չեն:

Ներկայումս առկա է ապացուցողական աջակցություն, որ.

1. Կրկնակի վերանայումները/վերլուծությունները հաջողությամբ հայտնաբերում և նվազեցնում են սխալները:
2. Խմբերը, որոնք իրականացնում են կրկնակի վերլուծություններ, ունեն սխալի ավելի ցածր տոկոս քան այն խմբերը, որոնք այն չեն իրականացնում:
3. Կրկնակի վերլուծություն կատարող խմբերը ունեն որակի այնպիսի չափում, որը կարող կիրառվել խմբի ներսում;
4. Կրկնակի վերլուծություն կատարող խմբերը, որոնք չեն հայտնաբերում զգալի սխալներ (<1 1000 դեպքի կտրվածքով), ունեն խնդիր կրկնակի վերանայման զգայունության հետ:

Ի վերջո, խմբերի միջև որակի չափման և համեմատության համար հետևյալ բնագավառները կարիք ունեն հետագա ուսումնասիրությունների.

1. Հայտնաբերել վերլուծության օպտիմալ մեթոդները, որոնք կիրառելի են բազմաթիվ տարբեր խմբերում:
2. Հայտնաբերել մեթոդներ կրկնակի վերլուծության զգայունության չափման և ապահովման համար:
3. Ստանդարտիզացնել վերլուծական մեթոդների չափորոշիչները, սխալների բնորոշումները և օպտիմալ արդյունքները:
4. Որոշել կատարման սպասված միջակայքերը:
5. Որոշել մեթոդները, որոնցով կճշտվեն կատարումները, որոնք դուրս են մնացել սպասված միջակայքից:

### **Եզրակացություն**

Մենք խորհուրդ ենք տալիս, որ պաթոլոգիայի (ախտահյուսվածաբանական և բջջաբանական) լաբորատորիաները ընդունեն դեպքերի պարբերաբար վերլուծության համակարգ, որը համապատասխանում է իրենց գործունեությանը և օգնում է հայտնաբերել կամ կանխարգելել ախտորոշիչ մեկնաբանական սխալները:

## **Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ**

Հայաստանի ախտաբանության բնագավառում լաբորատոր ծառայություններ մատուցող հաստատություններում տվյալ ուղեցույցերի ներդրումը պետք է կրի համակարգված բնույթ: Անհրաժեշտ է մշակել համապատասխան գործելակարգեր, որոնք կլինեն համահունչ ինչպես արդի ուղեցույցային խորհուրդներին, այնպես էլ տեղային կադրային և տեխնիկական հնարավորություններին: Աշխատանքային խմբի անդամների կարծիքով ներդրման հնարավոր խոչընդոտներից են.

- **Գործող լիցենզավորված լաբորատորիաների խիստ տարբեր տեխնիկական հագեցվածությունը**
- **Կադրերի սակավաթիվ լինելը**
- **Առկա կադրերի մեծամասնության՝ պատշաճ և ժամանակակից շարունակական կրթության բացակայությունը**
- **Պաթոլոգիայի բնագավառն ավելի շատ «մահվան» հետ կապող առկա կարծրատիպը**

Առաջարկվող աուդիտի ցուցանիշն է.

- **Բուժհաստատությունում ռեգուլյար ախտաբանական քննարկումների/կլոր սեղանների առկայությունը**

## **Գրականության ցանկ**

1. Nakhleh RE, Fitzgibbons PL, eds. Quality Management in Anatomic Pathology: Promoting Patient Safety Through Systems Improvement and Error Reduction. Northfield, IL: College of American Pathologists; 2005.
2. Valenstein P. Quality Management in Clinical Laboratories: Promoting Patient Safety Through Risk Reduction and Continuous Improvement. Northfield, IL: College of American Pathologists; 2005.
3. Wagar EA, Horowitz RE, Siegal GP, eds. Laboratory Administration for Pathologists. Northfield, IL: College of American Pathologists; 2011.
4. Howanitz PJ. Errors in laboratory medicine: practical lessons to improve patient safety. Arch Pathol Lab Med. 2005;129(10):1252–1261.
5. Meier FA, Varney RC, Zarbo RJ. Study of amended reports to evaluate and improve surgical pathology processes. Adv Anat Pathol. 2011;18(5):406–413.
6. Nakhleh RE. Diagnostic error in surgical pathology. Diagn Histopathol. 2013;19(12):433–437.
7. Renshaw AA, Gould EW. Increasing agreement over time in interlaboratory anatomic pathology consultation material. Am J Clin Pathol. 2013;140(2):215–218.
